Քաղվածք
Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/0528/02/24

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

25.03.2024թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր Ս. Երիցյանի

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործը, ըստ հայցի <<Ջինջ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02511015, պետական գրանցման համար՝ 286.110.01121) (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության 06.09.2023 թվականին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին,

ՎՃՌԵՑ

1. <<Ջինջ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության 06.09.2023 թվականին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, բավարարել՝

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության 06.09.2023 թվականին կայացված որոշումը՝ <<Ջինջ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, ճանաչել անվավեր (վերացնել):

2. ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից հօգուտ <<Ջինջ>> ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**